

#### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի  
2013թ-ի մայիսի 17-ի նիստի

#### Օրակարգ

1. Ատենախոսության թեմաների հաստատման հարցը:
2. ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչի ընտրության հարցը
3. Ընթացիկ հարցեր. ա/ Ասպիրանտուրայի երաշխավորության հարցը

#### Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել թեկնածուական ատենախոսությունների հետևյալ թեմաները. ա/ Հայ-ռուսական /Սլավոնական/ համալսարանի հայցորդ Աննա Կճանյան - «Խորհրդարանական դիվանագիտության դերը բազմավեկտոր ինտեգրացիոն գործընթացներում (ՀՀ ԱԺ գործունեության օրինակով)», ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ մասնագիտությամբ: Գիտական ղեկավար՝ ք.գ.դ. Ա. Մարգարով,

բ/ Հայ-ռուսական /Սլավոնական/ համալսարանի հայցորդ Աննա Մանուկյան-Արևմտաեվրոպական քաղաքական արժեհամակարգի ազդեցությունը ՀՀ ժողովրդավարացման վրա: Գիտական ղեկավար ք.գ.դ. Ա. Ենգոյան:

գ/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ 3-րդ կուրսի ասպիրանտ Մարիամ Հարությունյանի ատենախոսության թեման փոխել և վերաձևակերպել «Քրդական գործոնը Ռուսաստանի Դաշնության Մերձավոր և Միջինարևելյան քաղաքականության համատեքստում 1991-2008թթ.» ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտացմամբ: Գիտական ղեկավար հաստատել պ. գ. թ. դոցենտ Վ. Պետրոսյանին,

դ/ Ներսես Մկրտչյանի դոկտորական ատենախոսության թեմա հաստատել «Միացյալ Եվրոպայի գաղափարի էվոլյուցիան արդի ժամանակաշրջանում», ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ:

ե/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ 1-ին կուրսի ասպիրանտ Լուսինե Սարգսյան- «Ասիական տարածաշրջանային տերությունների շահերը և քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2008թթ.» ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտացմամբ: Գիտական ղեկավար՝ պ. գ. դ. Ա. Բայբուրդյան:

2. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչի թեկնածու Աշոտ Ենգոյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն:

զ/ Հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքներն ու հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 22 անդամներից քվեարկությանը մասնակցել են 19-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Ենգոյան Աշոտ – 19 կողմ,

դեմ չկա, 1 անվավեր քվեաթերթիկ:

Փակ հաղտնի քվեարկության արդյունքներով Աշոտ Ենգոյանը ընտրվել է Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչի պաշտոնում:

3. Գրիգոր Բալասանյանի «ՌԴ-ը և ԱՄՆ-ը ժամանակակից միջազգային գործընթացներում» դասախոսության նյութերի ժողովածուն երաշխավորել հրատարակության:

4. Ասպիրանտուրայում ուսումը շարունակելու համար երաշխավորել հանրային կառավարման մագիստրոս Դավիթ Դիլանյանին, Միջազգային հարաբերությունների մագիստրոս Արամայիս Գրիգորյանին:

**Խորհրդի նախագահ, պրոֆ.  
Խորհրդի քարտուղար, դոց.**

**Գ. Պետրոսյան  
Խ. Գալստյան**